Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Լեւոն Նազարյան
Խ.Աբովյանի անվան ՊՄՀ

Ղարաբաղյան հակամարտություն, նախապատմություն, առկա վիճակ եւ զարգացումներ

Ղարաբաղյան հակամարտության հարցը պետք է դիտարկել ոչ միայն հայ-ադրբեջանական, այլև հայ-թուրքական համատեքստում: Քանի որ Ղարաբաղի ու Սյունիքի զավթումով՝ Թուրքիան փորձում է Նախիջևանի ու նշված երկու շրջանների վրայով իրեն միավորել Ադրբեջանը, որից հետո հեշտությամբ կօկուպացնի ու կթուրքացնի պանթուրքական ծրագրերում առանցքային դերակատարում ունեցող Կովկասը: Ղարաբաղի ու Զանգեզուրի բռնազավթումը Թուրքիան հանձնարարել է փոքր եղբորը՝ Ադրբեջանին, իսկ ինքը վարագույրի ետևից նրան ցույց է տալիս ամեն տեսակի օգնություն՝ ջրից դուրս գալով չոր ու մնալով վարագույրի ետևում: Դեռևս 1918թ.-ին Բաթումի բանակցությունների ընթացքում Վեհիբ փաշան հայկական պատվիրակությանը ասել էր, որ Կովկասի իրենց արյունակից եղբայրներին՝ թաթարներին միավորվելու գործում թուրքական բանակի համար երկու կարևորագույն ճանապարհներից մեկը դա Նախիջևան-Զանգեզուր-Ղարաբաղն է, որով իրենք պիտի մտնեն Բաքու: 1918-1920թվերին Օսմանյան Թուրքիան ու մուսավաթական Ադրբեջանը սեփական ջանքերով, նշված տարածքները գրավելու անհաջող փորձերից հետո, այն մասամբ իրականացրին դեռևս նոր միջազգային ասպարեզ դուրս եկած Խորհրդային Ռուսաստանի հետ համատեղ ջանքերով: Նշված երեք շրջանները գրավելու իրենց ծրագիրը թուրքերը համադրեցին Խորհրդային Ռուսաստանի Կովկասում վարվող զավթողական նպատակների հետ: Մուսավաթական Ադրբեջանը մեկ գիշերվա մեջ դարձավ հեղափոխական ու խորհրդային, իսկ խորհրդային 11-րդ կարմիր բանակը առանց դիմադրության մտավ Ադրբեջան; 1920թ-ին նույն խորհրդային 11-րդ կարմիր բանակը թուրքերի ղեկավարությամբ, ծանր կորուստներից ու իրեն ցույց տրված հերոսական դիմադրությունից հետո՝ մտավ Ղարաբաղ, բռնազավթեց այն, հռչակեց Ղարաբաղը խորհրդային և քանի որ Հայաստանը դեռևս անկախ էր, այն հանձնեց Ադրբեջանի տնօրինությանը, մինչև որ խորհրդային կարգեր կհաստատվեին նաև Հայաստանում: 1920թ.-ի դեկտեմբերի 2-ին բռնի կերպով խորհրդայնացավ նաև Հայաստանը՝ կորցնելով իր

անկախությունը, սակայն Ադրբեջանը համառորեն չէր ուզում Ղարաբաղը հանձնել իր իսկական տիրոջը: Ղարաբաղը հայտարարվեց վիճելի տարածք, սահայն ելնելով այն հանգամանքից, որ Խորհրդային Ռուսաստանը Թուրքիան համարում էր արևելքում սոցիալիստական հեղափոխության առաջամարտիկ, ապա հույժ կարևոր էր համարում անմիջական հաղորդակցության հաստատումը իրեն հեղափոխական հռչակած քեմալական Թուրքիայի և խորհրդային Ադրբեջանի միջև: Թուրքիան ու Ադրբեջանը որպես հաղորդակցության միակ հնարավոր տարբերակ մատնանշեցին Նախիջևան-Զանգեզուր-Ղարաբաղ գոտին: Այսպիսով, Խորհրդային Ռուսաստանը արդեն լուծել էր վիճելի տարածքների հարցը հոգուտ Ադրբեջանի: Այդ էր պատճառը որ 1921թ.-ի հուլիսի 5-ին վիճելի Ղարաբաղի պատկանելիության հարցը քննարկող կով. բյուրոյի նիստում Ստալինը անձամբ ելույթ հայտարարեց Ղարաբաղը խորհրդային Հայաստանին վերադարձնելու կով. բյուրոյի նախորդ օրը ընդունած որոշումը և առանց քվեարկության որոշեց Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն; Սակայն այս որոշումը Ադրբեջանին ևս չգոհացրեց և նա 1921թ.-ի սեպտեմբերին դիմեց կով. բյուրո Ղարաբաղին ինքնավարություն տալու որոշումը վերանայելու համար: ԵՎ միայն ՀԽՍՀ կով. բյուրոյին ուղղված դիմումից հետո, որում խնդրվում էր իրագործել Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին հուլիսի 5-ի որոշումը, Անդրկովկասի ԿԿ կենտկոմը ԱԽՍՀ-ին հանձնարարեց <u>Լեռնային Ղարաբաղի մարզի հայկական մասին</u> տալ ինքնավարություն, դիտմամբ մոռանալով, որ Ղարաբաղը ամբողջովին հայկական տարածք է: Ադրբեջանը ստեղծեց ԼՂԻՄ սահմանները որոշող հանձնաժողով, որը առաջ քաշեց Քուրդիստանի սարքովի հարց և Լեռնային Ղարաբաղից անջատեց Արաքսի ափից մինչև փոքր կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային փեշերը ձգվող մի նեղ ու երկար շերտ, որպեսզի Լեռնային Ղարաբաղի, ինքնական վարչախեղման հետևանքով ձևավորված, ինքնավար մարզը շփման ոչ մի կետ չունենա ՀԽՍՀ-ի ու Իրանի հետ և մնա անկլավային վիճակում: Որոշ ժամանակ անց Ադրբեջանը ավելորդ համարեց ԼՂ-ից սեփական ու ապօրինի ցանկությամբ պոկած հատվածի «Քուրդիստան» տարբերակիչի գոյության անհրաժեշտությունը, ապա այն սեփականացրեց, համարեց ԼՂ-ի հետ կապ չունեցող տարածք և մասնատեց մեզ քաջ

հայտնի՝ Քելբաջարի, Լաչինի, Կուբաթլուի, Զանգելանի, Ջաբրայիլի ու Ֆիզուլիի շրջանների, որոնք հանդիսանում են նույն ԼՂ-ն: Այսօր Ադրբեջանը այդ տարածքները ներկայացնում է, որպես իրենից խլված սեփականություն՝ մոռանալով որ դա Խորհրդային Ռուսաստանի իրեն նվիրած ԼՂ-ի մի անբաժան մասն է, որոնց ինքը ապօրինաբար օտարել է մարզից՝ մտցնելով ԱԽՍՀ-ի վարչական կազմի մեջ: Այսքանով հարցը փակվեց և միայն 70 տարի անց, իր անագորույն վիճակը թեթևացնելու համար, 1988-ի փետրվարին արցախահայությունը որոշեց կուրծք տալ իր խեղված բախտի դեմ, սկսվեց ազգային-ազատագրական պայքար, որում Արցախի կողքին կանգնեց ողջ հայությունը: Հենց սկզբից երկրի իշխանությունները թշնամական դիրք բռնեցին շարժման նկատմամբ, ԼՂԻՄ-ը ԱԽՍՀ-ի կազմից հանելու և ՀԽՍՀ-ին միավորվելու արցախցիների որոշումը որակվեց որպես «էքստրեմիստական», «նացիոնալիստական», սանձահարվեց անգուսպ հակահայկական պրոպագանդա: Ոգեշնչված կենտրոնի անթաքույց աջակցությունից ազերի ազգայնամոլները, հայ ժողովրդի սահմանադրական պահանջին հակադրեցին ջարդեր ու բռնություններ; Ծնվեց դարի խայտառակություններից մեկը՝ Սումգայիթը, որտեղ հայը նորից ցեղասպանության ենթարկվեց, դրան հաջորդեցին Կիրովաբադը, Բաքուն և այլ քաղաքները: Բայց հայ ժողովուրդը այլևս կրավորական կեցվածք չընդունեց, այլ զենք վերցրեց սեփական հայրենիքը պաշտպանելու համար: Ազերիները, ոգևորված անպաշտպան ժողովրդի կոտորածով ու ցանկանալով կործանել Հայաստանի նորանկախ պետությունը, սանձազերծեցին լայնածավալ պատերազմ Հայաստանի ու Ղարաբաղի դեմ, որտեղ էլ կրեցին խայտառակ պարտություն: Ապա ջարդած գլուխները բռնած՝ փախան Բաքու, խնդրելով միջազգային հանրությանը, միջնորդել զինադադարի հաստատման համար: 1994-ին կնքվեց Բիշքեքի զինադադարը, հայկական նորաստեղծ բանակը տարավ իր առաջին փայլուն հաղթանակը, ազատագրեց ԼՂ-ն և ստորացուցիչ պարտության մատնեց Ադրբեջանին: Արցախյան փայլուն հաղթանակը եկավ ամրապնդելու ՀՀ անվտանգությունը, այս առումով հատկապես կարևոր են հետևյալ ձեռքբերումները՝

ա. ՀՀ-ի և ԼՂՀ-ի անխափան, անմիջական տարածքային հաղորդակցությունը;

բ. Ադրբեջանի և Նախիջևանի միջև այդպիսի կապի լիակատար չգոյությունը:

գ.Հայկական կողմի վերահսկողության տակ գտնվող տարածքների համեմատաբար բարձունքում լինելը:

դ. Հայկական բանակի լավ կազմակերպվածությունը և բարոյահոգեբանական վիճակը, բարձր մարտունակությունը;

Այսպիսով այսօր Հայաստանը Ադրբեջանի նկատմամբ ունի զգալի ռազմավարական առավելություն, որը անհրաժեշտ է ամեն գնով պահպանել: Այսուհանդերձ շարունակվում է Հայաստանի թուրք-ադրբեջանական շրջափակումը, Ադրբեջանը վերագինում է իր բանակը նոր պատերազմում հաղթելու հույսով, այդ երկու պետությունները շարունակում են Հայաստանը քայքայելու իրենց թշնամական քաղաքականությունը: Այսպիսի պայմաններում հայկական կողմը ինչպիսի արտաքին ճնշումների էլ ենթարկվի, չպետք է դիմի միակողմանի տարածքային զիջման: Այդպիսի զիջումները, բարելավելով Ադրբեջանի ռազմավարական վիճակը, միայն մեծացնում են նոր պատերազմի հավանականությունը: Ղարաբաղյան հակամարտությունը հայ-թուրքական հակամարտության օրգանական շարունակությունն է, 1905-1906-ից սկսած, նրա բաղկացուցիչն է հայ-թաթարական հակամարտությունը, որի հիմքում մինչև այսօր էլ ընկած է հայ ազգի բնաջնջման և Հայաստանին տիրանալու Թուրքիայի ձգտումը: Հակամարտության շարժիչ ուժերն են « հայկական սեպը » ոչնչացնելու Թուրքիայի ձգտումը, մյուս կողմից սեփական հայրենիքի վրա կենսունակ պետություն կառուցելու Հայաստանի նպատակը: Ուստի խոսքը ոչ միայն Ղարաբաղի, այլև նույն չափ ՀՀ անվտանգության մասին է: Ղարաբաղյան հակամարտությունը վերաբերում է Հայաստանի լինել-չլինելուն: Ղարաբաղյան հակամարտությունը որևէ լուծում տալու համար պետք է հաշվի առնվեն նաև ՀՀ երկարաժամկետ անվտանգության հեռանկարները: 1921թ.-ին Հայաստանի սահմանները գծվեցին այնպես, որ նա չկարողանար գոյատևել որպես անկախ պետություն, ուստի ՀԽՍՀ հիմքի վրա վերածնվելիք հայոց անկախ պետության համար կենսական անհրաժեշտություն էր Նախիջևանն ու Ղարաբաղը իրեն միացնել՝ Սյունիքի բռնազավթումը, հետևաբար մոտալուտ կործանումը փրկելու համար: Նախիջևանի լիակատար հայաթափությունից հետո Ղարաբաղը միակ կետն էր՝

Սյունիքը անվտանգ և նրա միջոցով հայ-իրանական կենսատու սահմանը պահպանելու համար: ԽՍՀՄ փլուզման զուգընթաց նորից կյանքի կոչվեց թուրքերի ուրվագծած Հայաստանը ոչնչացնելու ծրագիրը, որում Սյունիքի զավթումով Հայաստանին մահացու հարված պիտի հասցներ Ադրբեջանը և միայն Ղարաբաղի ազատագրումը փրկեց Հայաստանը թուրք-ադրբեջանական գերիշխանությունից: Արցախում հայկական զինուժի և պետականության բացակայության դեպքում Հայաստանը այլևս չի վերապրի ոչ տնտեսապես, ոչ հոգեպես: Ղարաբաղի հակամարտությունը ունի երկու բաղադրիչ՝ Արցախի ազատություն և ՀՀ անվտանգություն: 1992թ.-ից ի վեր Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության կազմակերպության« ԵԱՀԿ» շրջանակներում ընթանում են հակամարտության կարգավորմանը ուղղված բանակցություններ: Դրանք ցայսօր ուղղված են միայն «ուռցաբեկորի» վերին մասին, ընդարկելով, թե արդյոք արցախահայությունը ունի՞ ազատ ապրելու իրավունք, անտեսվում են Հայաստանի «ՀՀ, ԼՂՀ» երկարաժամկետ անվտանգության հարցերը: Իսկ ԵԱՀԿ միջնորդները հարցը դիտում են սեփական շահերի տեսանկյունից: Ռազմավարական ընկալումների ահռելի տարբերություն կա Ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցների «ՂՀԱՄ» և միջնորդների խորհրդի «ՄԽ» միջև՝

ՂՀԱՄ-հակամարտությունը ունի 100-ամյա պատմություն և շարունակվելու է ՄԽ մշակած կարգավորման ծրագրի գործադրումից հետո էլ:

ՄԽ- հակամարտությունը սկսվել է 1988թ.-ին և կավարտվի իր մշակած կարգավորման ծրագրի գործադրումից հետո:

ՂՀԱՄ- հակամարտությունը վերաբերում է Հայաստանի և Ադրբեջանի զբաղեցրած ողջ տարածքին:

ՄԽ- հակամարտությունը վերաբերում է միայն Ղարաբաղին:

ՀՀ, ԼՂՀ- անվտանգության երաշխիքները անհրաժեշտ են նակուստեք:

Ադրբեջան, Թուրքիա-անվտանգության երաշխիքները անհրաժեշտ են Նախիջևանի համար:

ՄԽ- անվտանգության երաշխիքները անհրաժեշտ են Ղարաբաղի համար:

Այս թերությունները և ռազմավարական ընկալումների ահռելի տարբերությունը «ՂՀԱՄ»-ի և «ՄԽ»-ի միջև պատճառ են հակամարտության չլուծման և առաջարկվող տարբերակների անբավարարության համար:

Այսօր «ԵԱՀԿ» ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզայի արած հայտարարությունից հետո պարզ է դառնում, որ ներկայումս կողմերին առաջարկվող կարգավորման փաթեթում կոչ է արվում կարգավորման առաջին փուլում հայկական զորքերը դուրս բերել ազատագրված շրջաններից, բացի Քարվաճառի ու Քաշաթաղի շրջաններից, տարածաշրջան են մտցվում միջազգային խաղապահ զորքեր, այդ տարածքում բնակեցվում են ադրբեջանցիներ: Երկրորդ փուլում Քարվաճառի ու Քաշաթաղի շրջանները դրվում են միջազգային խաղապահների հսկողության տակ, 15-20 տարի անց Ղարաբաղում և նույնիսկ Ադրբեջանի որոշ շրջաններում անցկացվում է հանրաքվե, որն էլ որոշում է ղարաբաղի վերջնական կարգավիճակը: Սա հայկական կողմի դեռևս 1997թ.-ին մերժած կարգավորման հին փուլային տարբերակն է, որը լրացվել է մի քանի կետերով: Հայ քաղաքական ու դիվանագիտական ընդհանուր մտքի թուլությունը, արտաքին ճնշումներին դիմադրավելու անկարողությունը պատճառ դարձան ԼՂ-ից անջատված 7 շրջանները «գրաված գոտիներ», «Ադրբեջանական շրջաններ» անվանակոչելու համար: Ի՞նչ Ադրբեջանական շրջանների մասին է խոսքը, երբ հարցը վերաբերում է նույն ԼՂ-ից Ադրբեջանի ավազակային ցանկությամբ պոկված, այնուհետև ապօրինաբար ԱԽՍՀ-ին միացված տարածքներին, որոնք ԼՂ-ի անբաժան մասն են կազմում, այս 7 շրջանների հանձնումը լուրջ վտանգ կստեղծի Հայաստանի համար և հնարավոր պատերազմի դեպքում Ադրբեջանը կստանա մեծ առավելություն մեր նկատմամբ և զինական և տարածքային հնարավորություն կունենա անհանգստացնել մերկացված Սյունիքը: Իսկ հորջորջվող ադրբեջանական փախստականների սարքովի վերադարձը կդառնա դանդաղ գործող ական ԼՂՀ-ում, ԼՂՀ-ն նորից կվերադառնա նախապատերազմյան իրավիճակին: 20 տարի անց ազերիները արագ կբազմանան, կփոխեն ԼՂՀ-ը ժողովրդագրական պատկերը, որը լուրջ կազդի հնարավոր հանրաքվեի արդյունքի վրա ի վնաս մեզ: Հնարավոր զարգացումներում վատթարագույն

սցենարներից խուսափելու համար հայկական կողմը պիտի հայտարարի իր անփոփոխ դիրքորոշումները՝

ա. Հայկական կողմը չի ընդունում «Ադրբեջանական գրավված շրջաններ» հասկացողությունը, քանի որ ազատագրված 7 շրջանները հանդիսանում են ԼՂ-ից Ադրբեջանին բռնի կցված շրջաններ, որոնք պիտի անպայման ունենան նույն կարգավիճակը, ինչ ԼՂՀ-ն և, պետք է այդ շրջանները ԼՂՀ-ի հետ կազմեն մեկ վարչական ամբողջություն: Դրանք նաև անվտանգության երաշխիքներ են

բ. ԼՂ-ի բնակչությունը էթնիկ հայկական է, որը միշտ էլ կազմել է մեծամասնություն այլազգի վերաբնակեցվածների նկատմամբ, Ղարաբաղի ադրբեջանցիները հանդիսացել են ԱԽՍՀ-ի քաղաքացիներ, որոնք վերաբնակեցվել են Ղարաբաղում, հետևաբար այժմ Ադրբեջանը պետք է իր քաղաքացիներին բնակեցնի ոչ թե ԼՂՀ-ում որը այլևս իրեն չի պատկանում, այլ իր վարչական տարածքում: ԼՂՀ-ն պարտավոր չէ ընդունել մարդկային այն զանգվածը,որոնք չեն հանդիսանում իր քաղաքացիները:

գ. Հայկական կողմը Ադրբեջանական կողմին որևէ զիջում կատարելու դեպքում պետք է ստանա համարժեք փոխհատուցում՝ տարածքային, անվտանգության, բարոյականության, տնտեսական ոլորտներում: Որոշակի տարածք զիջելու դիմաց հայկական կողմը Ադրբեջանից պետք է ստանա համապատասխան զիջում՝ Շահումյան, Գետաշեն, Նախիջևան և այլն:

դ. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերջնական տարբերակը չպետք է իջեցնի ՀՀ-ի և ԼՂՀ-ի անվտանգության ներկայիս մակարդակը:

Հայկական կողմը չի կարող զիջել 5 շրջան, մի ինչ-որ կասկածելի հանրաքվեի անցկացման դիմաց: Հայկական կողմը պետք է ծանրութեթև անի թե, որն է իր անվտանգության համար կայուն երաշխիք՝ միջազգային հանրության կողմից ԼՂՀ-ը ճանաչումը և տարածքների մի մասի հանձնումը ադրբեջանին, թե տարածքների գոյության փաստը: Այժմ, երբ Ադրբեջանը հայտարարում է, որ պատրաստվում է 30 տարի հետո Հայաստանը ոչնչացնել, ապա տարածքային զիջում անել Ադրբեջանին հավասարազոր է ինքնասպանության: Հնարավոր զարգացումները երկուսն են կամ համաձայնվել զիջումների հետ՝ թուլացնելով սեփական դիրքերը կամ հայկական

կողմը կոշտացնում է դիրքորոշումը, համառորեն դիմագրավում է արտաքին ճնշումներին՝ պահպանելով սեփական գերակա դիրքերը, այնուհետև ոչ մի արդյունքի չհասնելու դեպքում , իր համար փակված է համարում հարցը, դուրս է գալիս բանակցություններից, ճանաչում է ԼՂՀ-ը անկախությունը՝ պատրաստվելով Ադրբեջանի հետ նոր բախման:

Մենուա Սողոմոնյան
ԵՊՀ

Մեծ Բրիտանիայի դերը ղարաբաղյան հակամարտության շուրջ խաղաղության եւ կայունության հաստատման հարցում 1990-ականների առաջին կեսին

Մեծ Բրիտանիան ի սկզբանե ներգրավված է եղել ղարաբաղյան հակամարտության կարգավորման դժվարին գործընթացում: Ինչպես իմանում ենք Մեծ Բրիտանիայի Արտաքին և համագործակցության գործերի նախարարության պաշտոնական հաղորդագրությունից, 20-րդ դարի վերջին տասնամյակի բրիտանական արտաքին քաղաքականության գլխավոր առաջնահերթությունը համարվել է հետսառըպատերազմյան Եվրոպայի վերակերտումն ու կայունության հաստատումն այդտեղ: Եվ քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասի պետությունները հայտարարեցին Եվրոպայի մաս դառնալու իրենց անխախտ որոշման մասին և բռնեցին եվրաինտեգրման ուղին, ուստի Բրիտանիան պետք է որ շատ անելիքներ ունենար հակամարտություններով լի այս տարածաշրջանում: Թեև այս պետությունը երբեք չի հանդիսացել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում միակ լիազոր միջազգային կառույցի՝ ԵԱՀԿ Մինսկի Խմբի անդամ, սակայն այն ազդել և շարունակում է ազդեցություն գործել կարգավորման գործընթացի վրա՝ առաջին հերթին տարածաշրջանում իր նավթային շահերի պաշտպանության պահանջից դրդված: Նշենք, որ Մեծ Բրիտանիայի նավթային ընկերությունները այսօր լրջագույն դերակատարություն ունեն ադրբեջանական նավթի արդյունահանման և արտահանման գործում:

Բրիտանական նավթային ընկերությունները, և առաջին հերթին British Petroleum-ը, հսկայական դեր են խաղացել (մինչ օրս էլ շարունակում են խաղալ) Ադրբեջանի նավթի արդյունահանման և

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ